



Կարգապահական գործ թիվ ԿԳ-20007

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2020 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 120-րդ ԿԳ նիստի

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ԹԻՎ ԿԳ/87-Ա**

**ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐ ՆԻՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆՑԻՆ, ԵՐՎԱՆԴ ՎԱՐՈՍՅԱՆԻՆ,
ՏԻԳՐԱՆ ԵԳՈՐՅԱՆԻՆ, ՀՐԱՆՏ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ, ԻՆԵՍՍԱ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ,
ՀԱՅԱՐՓԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ, ՄՈՒՇԵՂ ՇՈՒՇԱՆՅԱՆԻՆ, ԼԻՊԱՐԻՏ
ՍԻՄՈՆՅԱՆԻՆ, ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ ԵՎ ԱՐԱՅԻԿ
ՊԱՊԻԿՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ
ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհուրդը
(այսուհետ նաև՝ **խորհուրդ**), նիստը նախագահող՝ Գայանե Դեմիրջյանի, խորհրդի
անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Հրանտ Անանյանի, Մելանյա Առուստամյանի,
Սիմոն Բաբայանի, Հարություն Հարությունյանի և Արմեն Ֆերոյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Աստղիկ Գևորգյանի,

քննության առնելով փաստաբան Նինա Կարապետյանցի (արտոնագիր՝ թիվ
551), Երվանդ Վարոսյանի (արտոնագիր՝ թիվ 776), Տիգրան Եգորյանի
(արտոնագիր՝ թիվ 1187), Հրանտ Գևորգյանի (արտոնագիր՝ թիվ 440), Ինեսսա
Պետրոսյանի (արտոնագիր՝ թիվ 20), Հայարփի Սարգսյանի (արտոնագիր՝ թիվ
1926), Մուշեղ Շուշանյանի (արտոնագիր՝ թիվ 387), Լիպարիտ Սիմոնյանի
(արտոնագիր՝ թիվ 37), Հարություն Բաղդասարյանի (արտոնագիր՝ թիվ 707) և
Արայիկ Պապիկյանի (արտոնագիր՝ թիվ 970) կարգապահական
պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Ձ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Վ. Ա.
Գրիգորյանը (այսուհետ՝ նաև **Դիմող**), դիմելով Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատ (այսուհետ՝ նաև **Պալատ**), հայտնել է հետևյալը.

Փաստաբաններ Նինա Կարապետյանցը, Երվանդ Վարոսյանը Տիգրան
Եգորյանը, Հրանտ Գևորգյանը, Ինեսսա Պետրոսյանը, Հայարփի Սարգսյանը,
Մուշեղ Շուշանյանը, Լիպարիտ Սիմոնյանը, Հարություն Բաղդասարյանը և Արայիկ
Պապիկյանը թիվ ԵԷԴ/0090/01/17 քրեական գործով հանդիսանում են

ամբաստանյալների պաշտպանները:

Նշված փաստաբանները, պատշաճ ծանուցված լինելով դատական նիստերի ժամանակի և վայրի մասին, չարձագանքելով գրավոր ծանուցումներին, առանց հարգելի պատճառի, չեն ներկայացել 14 դատական նիստերի, ինչի հետևանքով դատական նիստերը շուրջ մեկ տարի անհարկի ձգձգվել են:

Ըստ Դիմողի՝ նշված փաստաբաններն իրենց պաշպանյալների շահերը պաշտպանում են ոչ պատշաճ, ըստ էության հրաժարվում են իրենց պաշտպանյալների շահերը ներկայացնելուց և դատարանի նկատմամբ դրսևորում են անհարգալից վերաբերմունք:

Դիմողը խնդրել է քննության առնել նշված փաստաբանների վարքագիծը և արդյունքների մասին հայտնել դատարան:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

Պալատի նախագահի 22.04.2020թ. թիվ 72-Ա/ԿԳ-20007 որոշման հիման վրա փաստաբաններ Նինա Կարապետյանցի, Երվանդ Վարոսյանի, Տիգրան Եգորյանի, Հրանտ Գևորգյանի, Ինեսսա Պետրոսյանի, Հայարփի Սարգսյանի, Մուշեղ Շուշանյանի, Լիպարիտ Սիմոնյանի, Հարություն Բաղդասարյանի և Արայիկ Պապիկյանի (**այսուհետ միասին վկայակոչվելու դեպքում՝ փաստաբաններ**) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» օրենքի (**այսուհետ՝ նաև Օրենք**) 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 4.1 կետի պահանջների խախտման հատկանիշներով:

23.04.2020թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Ռուբեն Բալոյանին (**այսուհետ՝ նաև Նախապատրաստող**):

3. Դիմողի և փաստաբանների համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.

3.1. Դիմողի համառոտ բացատրությունը.

Գործի նախապատրաստման ընթացքում Դիմողը ներկայացրել է բացատրություն և հայտնել, որ թիվ ԵԷԴ/0090/01/17 քրեական գործով, ընդհանուր առմամբ, նշանակված է եղել թվով 17 դատական նիստ, որոնցից 4 դատական նիստերը հետաձգվել են՝ համապատասխան տեղեկանքներով և դատական նիստերի ձայնագրություն չի իրականացվել, սակայն նշված 14 դատական նիստերին էլ պաշտպանները դատարան չեն ներկայացել:

Միաժամանակ, Դիմողը խնդրել է կարգապահական նիստ իրականացնել իր բացակայությամբ՝ հիմք ընդունելով դատական նիստերի ձայնագրառման համառոտագրումները:

Պալատի խորհրդի նիստին Դիմողը չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցված է եղել նիստի օրվա, վայրի և ժամի մասին:

3.2. Փաստաբանների բացատրությունները

3.2.1 Նինա Կարապետյանցի համառոտ բացատրությունը.

10.04.2020թ. Պալատ է մուտքագրվել (**մուտք՝ №-672-20**) Նինա Կարապետյանցի բացատրությունը, որում նա հայտնել է հետևյալը.

Դեռևս դատավոր Ա. Գաբրիելյանի նախագահությամբ ընթացող դատական նիստերի ժամանակ՝ Նինա Կարապետյանցի պաշտպանյալները հրապարակայնորեն հրաժարվել են իր ծառայություններից, իր պաշտպանյալների հայտարարությունն Ա. Գաբրիելյանի կողմից ընդունվել է, և հաջորդիվ կայացած նիստերին, Նինա Կարապետյանցի պաշտպանյալների կամքին հակառակ՝ Ա. Գաբրիելյանի կողմից ներգրավվել են հանրային պաշտպաններ:

Իրեն հասցեագրված ծանուցագրերին չարձագանքելու մասով՝ Նինա Կարապետյանցը հայտնել է, որ ծանուցագրերին չի արձագանքել՝ կարծելով, որ իրեն ծանուցագրեր ուղարկելը շփոթմունք է, քանի որ ինքն այլևս կապ չունի նշված գործի հետ:

Դիմողը նշել է, որ Դիմողի դիմումը պետք է հետ ուղարկվի դատարան՝ այն պատշաճ ձևով Պալատին ներկայացնելու պահանջով:

3.2.2 Փաստաբան Հարություն Բաղդասարյանի համառոտ բացատրությունը.

Պալատի խորհրդի նիստին ներկայացել է փաստաբան Հարություն Բաղդասարյանը և հայտնել է հետևյալը.

Արամ Մանուկյանի և իր միջև բացակայում է փաստաբանական ծառայություններ մատուցելու վերաբերյալ պայմանագիր, հետևաբար ինքը չի հանդիսանում Արամ Մանուկյանի պաշտպանը:

Արամ Մանուկյանի պաշտպան ինքը եղել է նախկինում, իսկ դատավոր Վ. Ա. Գրիգորյանի վարույթում գործը գտնվելու ժամանակահատվածում արդեն չի հանդիսացել Արամ Մանուկյանի պաշտպանը: Հարություն Բաղդասարյանը նաև ավելացրել է, որ սույն գործով, դեռևս դատավոր Ա. Օհանյանի վարույթում գտնվելու ժամանակահատվածում՝ ներգրավվել են հանրային պաշտպաններ, հետևաբար ամբաստանյալները առանց պաշտպանի չեն և հանրային պաշտպանները մասնակցում են դատական նիստերին:

3.2.3 Փաստաբան Ինեսա Պետրոսյանի համառոտ բացատրությունը.

23.04.2020թ. Պալատ է մուտքագրվել (**մուտք՝ №-746-20**) Ինեսա Պետրոսյանի բացատրությունը, որում հայտնվել է հետևյալը.

Թիվ ԵԷԴ/0090/01/17 քրեական գործով ինքը հանդիսացել է ամբաստանյալ Արամ Պավելի Մանուկյանի պաշտպանը:

Դատաքննության սկզբնական փուլում՝ որպես Արամ Մանուկյանի շահերի պաշտպան, դատարանը ներգրավել է հանրային պաշտպան:

Փաստաբանը հայտնել է նաև, որ իր և Արամ Մանուկյանի փոխադարձ համաձայնության պայմաններում՝ դադարեցրել է վերջինիս պաշտպանությունը, իսկ Արամ Մանուկյանի պաշտպանությունը շարունակել է իրականացնել՝ դատարանի կողմից նշանակված հանրային պաշտպանը:

3.2.4 Փաստաբան Հայարփի Սարգսյանի համառոտ բացատրությունը.

23.04.2020թ. Պալատ է մուտքագրվել (մուտք՝ №-747-20) Հայարփի Սարգսյանի բացատրությունը, որում հայտնվել է հետևյալը.

Թիվ ԵԷԴ/0090/01/17 քրեական գործով փաստաբանը հանդիսացել է ամբաստանյալ Հովհաննես Գառնիկի Հարությունյանի պաշտպանը:

Թիվ ԵԷԴ/0090/01/17 քրեական գործով վերջին դատական նիստը տեղի է ունեցել 01.02.2019 թվականին՝ դատավոր Ա.Խաչատրյանի նախագահությամբ, այնուհետև տեղեկացել է, որ դատավորը փոխվել է և մինչ օրս որևէ ծանուցում չի ստացել:

Փաստաբանը հայտնել է նաև, որ նշված քրեական գործով ներգրավված են եղել նաև հանրային պաշտպաններ, հետևաբար նույնիսկ իր բացակայությունը չէր կարող խոչընդոտ հանդիսանալ՝ նշված քրեական գործերի կայացման հարցում:

3.2.5 Փաստաբան Լիպարիտ Սիմոնյանի համառոտ բացատրությունը.

29.04.2020թ. Պալատ է մուտքագրվել (մուտք՝ №-787-20) Լիպարիտ Սիմոնյանի բացատրությունը, որով նա հայտնել է հետևյալը.

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Վ. Ա. Գրիգորյանի կողմից ՀՀ փաստաբանների պալատ ներկայացված 16.04.2020 թվականի գրությունից անհասկանալի է, թե դատարանը արդյոք որոշում կայացրել է փաստաբանների նկատմամբ պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումով ՀՀ փաստաբանների պալատ դիմելու մասին: Եթե այո, ապա նման որոշումը կայացվել է դատական նիստում՝ առանձին որոշմամբ, թե ոչ:

Փաստաբանը նշել է, որ նկատի ունենալով այն հանգամանքը, որ իր ունեցած տվյալներով դատարանի նման որոշում առկա չէ՝ փաստաբանների նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

3.2.6 Փաստաբաններ Երվանդ Վարոսյանի, Տիգրան Եգորյանի, Հրանտ Գևորգյանի, Մուշեղ Շուշանյանի, և Արայիկ Պապիկյանի կողմից բացատրություն չի ներկայացվել:

3.3. Վկաների ցուցմունքները.

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4.Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.

21.06.2020 թվականին Նախապատրաստողը կազմել է եզրակացություն:

Կարգապահական գործը Պալատի խորհրդին է հանձնվել 26.06.2020 թ.-ին:

Պալատի խորհրդի նիստերը տեղի են ունեցել 04.08.2020թ., 03.11.2020թ. և 15.12.2020թ. ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի

կանոնագրի (այսուհետ՝ նաև Կանոնագիրը) հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 3.10.3 ենթակետի համաձայն՝ Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Պալատի խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստը.

- Թիվ ԵԷԴ/0090/01/17 քրեական գործով փաստաբաններ Նինա Կարապետյանը, Երվանդ Վարոսյանը, Տիգրան Եգորյանը, Հրանտ Գևորգյանը, Ինեսա Պետրոսյանը, Հայարիկ Սարգսյանը, Մուշեղ Շուշանյանը, Լիպարիտ Սիմոնյանը, Հարություն Բաղդասարյանը և Արայիկ Պապիկյանը թիվ ԵԷԴ/0090/01/17 քրեական գործով ոչ բոլոր նիստերին են մասնակցել: Սույն փաստը հաստատվում է դիմումով և դատական նիստերի արձանագրություններով:

6. Փաստաբանների անձր բնութագրող հանգամանքները.

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝

- **Հրանտ Գևորգյանը** փաստաբան է հանդիսանում 29.06.2005 թվականից: 2015-2020թթ. ընկած ժամանակահատվածում, վերջինիս նկատմամբ հարուցվել է 8 կարգապահական վարույթ, որոնցից 5-ը կարճվել է, 3 վարույթով Հրանտ Գևորգյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության: Կարգապահական տույժերից մեկը մարվել է, մյուսը ուժի մեջ չի մտել, իսկ երրորդը գործում է.

- **Հարություն Բաղդասարյանը** փաստաբան է հանդիսանում 19.10.2007 թվականից: 2017-2020թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ հարուցվել է 8 կարգապահական վարույթ, որոնցից 5-ը կարճվել է, 3 վարույթով Հարություն Բաղդասարյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության, որոնցից երկուսը մարվել են, երրորդն ուժի մեջ չի մտել.

- **Ինեսա Պետրոսյանը** փաստաբան է հանդիսանում 18.03.1999 թվականից: 2015-2020թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ հարուցվել է 4 կարգապահական վարույթ, որոնք բոլորը կարճվել են.

- **Լիպարիտ Սիմոնյանը** փաստաբան է հանդիսանում 19.03.1999 թվականից: 2015-2020թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ հարուցվել է 2 կարգապահական վարույթ, որոնք կարճվել են.

- **Հայարիկ Սարգսյանը** փաստաբան է հանդիսանում 25.04.2015 թվականից: 2015-2020թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ հարուցվել է 2 կարգապահական վարույթ, որոնք կարճվել են.

- **Երվանդ Վարոսյանը** փաստաբան է հանդիսանում 19.10.2007 թվականից: 2015-2020թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ հարուցվել է 9

կարգապահական վարույթ, որոնցից 3-ը կարճվել է, 6 վարույթով Երվանդ Վարոսյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության, որոնցից 4 հիմնական կարգապահական տույժը մարվել է, իսկ 2 լրացուցիչ տույժ մարված չէ, 2-ը ուժի մեջ չեն մտել.

- **Արայիկ Պապիկյանը** փաստաբան է հանդիսանում 24.10.2009 թվականից: 2015-2020թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ հարուցվել է 26 կարգապահական վարույթ, որոնցից 14-ը կարճվել է, 12 վարույթով Արայիկ Պապիկյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության, որոնցից մեկով կարգապահական տույժը մարվել է, 11-ն ուժի մեջ չեն մտել.

- **Մուշեղ Շուշանյանը** փաստաբան է հանդիսանում 28.02.2000 թվականից: 2015-2020թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ հարուցվել է 21 կարգապահական վարույթ, որոնցից 3-ը կարճվել է, 18 վարույթով Մուշեղ Շուշանյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության, որոնցից 14-ի դեպքում կարգապահական տույժը մարվել է, 4-ը ուժի մեջ չեն մտել.

- **Նինա Կարապետյանը** փաստաբան է հանդիսանում 20.10.2006 թվականից: 2015-2019թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ հարուցվել է 9 կարգապահական վարույթ, որոնցից 4-ը կարճվել է, 5 վարույթով Նինա Կարապետյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության, որոնցից 4-ը մարվել է, 1-ը ուժի մեջ չի մտել.

- **Տիգրան Եգորյանը** փաստաբան է հանդիսանում 15.10.2011 թվականից: 2015-2020թթ. ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ հարուցվել է 14 կարգապահական վարույթ, որոնցից 7-ը կարճվել է, 6 վարույթով Տիգրան Եգորյանը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության, 5-ը ուժի մեջ չի մտել, 1 կարգապահական տույժը մարված չէ:

7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբաններ Նինա Կարապետյանի, Երվանդ Վարոսյանի, Տիգրան Եգորյանի, Հրանտ Գևորգյանի, Ինեսսա Պետրոսյանի, Հայարիի Սարգսյանի, Մուշեղ Շուշանյանի, Լիպարիտ Սիմոնյանի, Հարություն Բաղդասարյանի և Արայիկ Պապիկյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:

Կանոնագրքի 4.1 կետի համաձայն՝ փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային փորձունալի առջև, պետք է ենթարկվի այդ դատարանի կամ փորձունալի կողմից կիրառվող վարվելակերպի կանոններին, այդ թվում հարգանքով վերաբերվել դատավորին և դատավարության մյուս մասնակիցներին: Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի կամ արբիտրի գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Փաստաբանը դատարանի հանդեպ ճշգրիտ հարգանք և համակրանք դրսևորելու հետ միաժամանակ պետք է իր վստահորդի շահերը

պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը կամ ցանկացած հետևանքները, որոնք կպատահեն իր կամ ցանկացած այլ անձի հետ:

Կանոնագրքի մեջբերված իրավադրույթից հետևում է, որ փաստաբանը վարելով իր վստահորդի գործը դատարանում կամ արբիտրաժային տրիբունալում, պարտավոր է ենթարկվել այդ հաստատություններում վարքագծի ճանաչված, ընդունված և (կամ) ամրագրված կանոններին: Կանոնագրքի 4.1 ենթակետով նախատեսված նորմը նաև վկայակոչող է և հղում է պարունակում փաստաբանի և դատարանի հարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտի: Տվյալ դեպքում, հաշվի առնելով, որ խոսք է գնում քրեական գործի դատական քննության մասին, այդ իրավական ակտը ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքն է (**այսուհետ՝ նաև ՔԴՕ**):

ՔԴՕ-ի 73-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին մասի համաձայն՝ Պաշտպանը պարտավոր է՝ կասկածյալին և մեղադրյալին իրավաբանական օգնություն ցույց տալու համար ներկայանալ քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով:

Նման պայմաններում, Խորհուրդն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրմանը.

- արդյոք Թիվ ԵԷԴ/0090/01/17 քրեական գործով փաստաբանները հանդիսանում են ամբաստանյալների պաշտպանները, արդյոք նրանք եղել են պատշաճ ծանուցված:

Տվյալ դեպքում դիմողի կողմից փաստաբաններին վերագրվում է ԵԷԴ/0090/01/17 քրեական գործով ամբաստանյալների պաշտպանները հանդիսանալով հանդերձ, առանց հարգելի պատճառի 14 դատական նիստերի չներկայանալու վարքագիծը: Փաստաբաններից ոմանք հերքել են ամբաստանյալների պաշտպանները հանդիսանալով հանդերձ դատական նիստերին իրենց կողմից ներկայանալու հանգամանքը: Փաստաբաններից Հայարփի Սարգսյանն առհասարակ հերքել է իր կողմից դատական նիստերի մասին ծանուցված լինելու հանգամանքը:

Կարգապահական վարույթ հարուցելու մասին Պալատի նախագահի 22.04.2020թ. որոշմամբ հստակ նշված է, որ պետք է առանձնահատուկ քննության առարկա դարձնել Նինա Կարապետյանցից իր պաշտպանյալի հրաժարվելու և դատարանի կողմից այդ հրաժարումն ընդունելու հանգամանքը:

2020 թվականի նոյեմբերի 3-ին փաստաբանների պալատի խորհուրդը որոշել է կարգապահական գործի քննությունը հետաձգել և դիմել Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Ա. Ս. Մելիքսեթյանին՝ խնդրելով տրամադրել հետևյալ տեղեկությունը.

Արդյո՞ք թիվ ԵԷԴ/0090/01/17 քրեական գործով պաշտպանյալները հրաժարվել են իրենց պաշտպաններից՝ հրաժարում տեղի ունեցել է, թե ոչ, և, եթե արձանագրվել է հրաժարում, ապա Խորհրդին տրամադրել այդպիսի ապացույց:

Չնայած Խորհրդի ձեռնարկած միջոցներին, սույն գործով չի ապացուցվել այն հանգամանքը, որ փաստաբանները հանդիսացել են տվյալ քրեական գործով պաշտպաններ այն ժամանակահատվածում, երբ չեն ներկայացել դատական նիստերին:

Ավելին՝ Դատարանն իր 09.12.2020թ. գրությանը հայտնել է, որ «Միևնույն ժամանակ, հաշվի առնելով այն, որ փաստաբաններից Դատարանի կողմից ուղարկված գրությանն արձագանք չի տրվել և քրեական գործի քննության արդյունավետ կազմակերպման խնդիրը շարունակում է առկա լինել, հետևաբար ակնկալվում է նաև Ձեր միջոցով համապատասխան տեղեկությունների առկայության դեպքում հայտնել Դատարանին ԵԷԴ/0090/01/17 գործով պաշտպանների՝ դատավարության մասնակից լինելու կամ չլինելու մասին»:

Կարգի 3.3.1 ենթակետի համաձայն՝ կողմերից յուրաքանչյուրը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

Կարգի 3.3.5 ենթակետի համաձայն՝ եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:

Կարգի 7.2.6 ենթակետի համաձայն՝ Կարգապահական խախտման փաստը ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարապվել Օրենքի և սույն կարգի դրույթներին համապատասխան պարզաճ իրավական ընթացակարգի շրջանակում, մեկնաբանվում են հոգուր Պապասխանողի:

Խորհուրդն արձանագրում է, որ գործում առկա չէ որևէ ապացույց առ այն, որ փաստաբաններ Նինա Կարապետյանցը, Երվանդ Վարոսյանը, Տիգրան Եգորյանը, Հրանտ Գևորգյանը, Ինեսսա Պետրոսյանը, Հայարփի Սարգսյանը, Մուշեղ Շուշանյանը, Լիպարիտ Սիմոնյանը, Հարություն Բաղդասարյանը և Արայիկ Պապիկյանը թիվ ԵԷԴ/0090/01/17 քրեական գործով դատական նիստերից բացակայելու ժամանակահատվածում հանդիսացել են ամբաստանյալների պաշտպանները: Հետևաբար, այս հանգամանքի մասով չփարատված կասկածները մեկնաբանվում են փաստաբանների օգտին:

Նկատի ունենալով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ Փաստաբանների վարքագծում առկա չէ «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի և Կանոնագրքի 4.1 կետի պահանջների խախտման հատկանիշներ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 10-րդ հոդվածի, 39-րդ և 39.8-րդ հոդվածների պահանջներով՝
Խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբաններ Նինա Կարապետյանցի (արտոնագիր՝ թիվ 551), Երվանդ Վարոսյանի (արտոնագիր՝ թիվ 776), Տիգրան Եգորյանի (արտոնագիր՝ թիվ 1187), Հրանտ Գևորգյանի (արտոնագիր՝ թիվ 440), Ինեսսա Պետրոսյանի (արտոնագիր՝ թիվ 20), Հայարփի Սարգսյանի (արտոնագիր՝ թիվ 1926), Մուշեղ Շուշանյանի (արտոնագիր՝ թիվ 387), Լիպարիտ Սիմոնյանի (արտոնագիր՝ թիվ 37), Հարություն Բաղդասարյանի (արտոնագիր՝ թիվ 707) և Արայիկ Պապիկյանի (արտոնագիր՝ թիվ 970) նկատմամբ ՀՀ փաստաբանների պալատի նախագահի

22.04.2020թ. թիվ 72-Ա/ԿԳ-20007 որոշման հիման վրա հարուցված կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբաններին և Դիմողին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկ ամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

ՀՀ փաստաբանների պալատի
խորհրդի անդամ՝

Գայանե Դեմիրջյան

**15 դեկտեմբեր, 2020թ.
թիվ ԿԳ/87-Ա
ք. Երևան**